# ԿԱՐԾԻՔ

## Աննա Երեմի Երկանյանի «Գևորգ Դևրիկյանի ստեղծագործությունը» ատենախոսության մասին

Գրականությունն անընդհատ նորոգվող, զարգացում ապրող օրգանիզմ է և չի հանդուրժում ոչ մի կաղապարվածություն: Վերջին 40-50 տարիներին գրական մամուլում, գրականագիտական առանձին գրքերում և ձեռնարկներում հաճախ հանդիպում են արդեն կաղապարված «արդի» եզրույթի բազմաթիվ կիրառությունների: Արդի եզրը կիրառվում է թե՛ 60-70 ական թվականների, և թե՛ ներկայիս ընթացիկ գրականության առիթով: Սակայն գրականության պատմությունը այդ տարիների առիթով ի հայտ է բերում իրարից տարբեր պարբերացումներ: Այս հանգամանքը նկատի ունենալով կարծում ենք, Աննա Երկանյանի ատենախոսությունը, հենց խնդրադրման և վերնագրային ելակետում արդեն իսկ կաղապարներից դուրս է և գնահատման ելակետը ճշգրիտ է: Այլապես, եթե ատենախոսը դիտարկեր արդի գրականության ելակետից թերացումից չէր խուսափի: Ատենախոսության մեջ ժամանակային ընդգրկումը հստակ է և հարուստ գրական նյութ է պարունակում: Տարբեր գրական-գրողական տեսակներ ու ուղղություններ է ի հայտ բերում ատենախոսը՝ Գևորգ Դևրիկյանի գրական ժառանգության նյութի հիման վրա: Սա անմիջապես կապված է նաև այն հանգամանքով, որ 60-ականների գրական սերունդը նոր գիր բերեց և նոր նպատակներ:

Աննա Երկանյանն իր ատենախոսությունը բաժանել է երեք գլուխների: «Գևորգ Դևրիկյանի Անիականը» վերնագրով առաջին գլխում ատենախոսը փնտրում է և գտնում է, անգամ ճանաչելի է դարձնում հայոց քաղաքամայր Անին՝ «Տրդատ ճարտարապետ» և «Գոյամարտ» պատմավեպերի գեղարվեստական նյութի հիման վրա: Ատենախոսը ճշգրիտ բնութագրմամբ ձևակերպում է. ««Տրդատ ճարտարապետ» պատմավեպը կարելի է համարել նաև պատմագեղարվեստական տարեգրություն» (էջ 25): Այ, այստեղ է դևրիկյանական գրառճի

առանձնահատկությունը, երբ գեղարվեստական արձակի սահմաններում տեղավորվում են ակնարկը, տարեգրությունը, կենսագրապատումը, պատմական ուսումնասիրությունը և այլն: Ատենախոսության հետագա շարադրանքում մանրամասն ներկայացվում է թե՛ Դերիկյանի պատմափիլիսոփայական հայացքներին, և թե՛ հայ ավանդույթի հետ առկա գրողի կապը, որն առաջնորդող է եղել գրողին իր ողջ գրական կենսագրության ընթացքում: «Տրդատ ճարտարապետ» և «Գոյամարտ» պատմավեպերի կերպարներին մանրամասնորեն անդրադառնալով ատենախոսը այնպես է կառուցել իր աշխատանքը, որ երևում է նաև Դերիկյանի ամենակարևոր կերպարը՝ Անին: Անին ծեր վանականի նման իմաստուն ու խորհրդավոր կերպար է՝ քրիստոնեական ավանդույթներով ապրող: Անին դառնում է նաև հայ ազգի խորհրդանիշը, իսկ թշնամին՝ Կոստանդինապոլիսը, միշտ սպառնում է Անիի գոյությանը:

Աշխատանքի երկրորդ գլուխը՝ «Հայոց պատմության անցումային շրջանին նվիրված ստեղծագործությունները», նվիրված է Դերիկյանի հայրենագիտակցության նոր գեղագիտական խնդիրներին ու զարգացման ուղղություններին: Հիմնական թեման՝ պանդխտությունն է, որին հայ գրականության մեջ շատերն են անդրադարձել: Սակայն Գևորգ Դերիկյանը իր «Վիրավոր կռունկ» վեպում նորովի հայացք է նետում այդ հավերժական հարցին: Քանի որ վեպը անմիջական կապ ունի նաև Դերիկյանի «Սրբացած հուշարձան» աշխատության հետ, ուստի ատենախոսը ճիշտ է անում, որ նույն գլխում զուգահեռ քննություն է անցկացնում: Բովանդակային շերտերը ի ցույց դնելու ճանապարհով ատենախոսը շեշտադրում է նաև հեղինակի գաղափարական հենքը՝ ազգապահպանությունը: Իսկ ինչ վերաբերում է առանձին դիպվածների վերլուծություններին, պետք է նշենք, որ Աննա Երկանյանի միտքն այս դեպքում ազատագրվում է ազգային խնդիրների կապանքներից և ինքնուրույնությունը հետաքրքիր մեկնաբանությունների հնարավորություն է տալիս:

Երրորդ գլխում՝ «Գևորգ Դերիկյանի փոքր արձակը», ատենախոսը փորձում է բացել Դերիկյանի պատմվածքներում առկա գեղարվեստա-փիլիսոփայական շերտերը: Հեղինակի պատմվածքները առանձին բաժանումների է կատարում

ատենախոսը՝ «պատմական թեմաներով գրված, արդիական խնդիրներ արծարծող և մանկության պատառիկներ» (էջ 103): Նման կերպ առանձին խնդրադրումներով են քննվում պատմվածքները, ամբողջացնելով գրողի ստեղծագործական աշխարհն ու կենսափիլիսոփայությունը:

Նույնն է նաև միջնադարյան գրիչ-ծաղկողների առիթով: Գրողը նրանց համարում էր զինվորներ և ամբողջական համակարգով է ի հայտ բերում, իրեն՝ Գևորգ Դերիկյանին էլ դարձնելով մի գրիչ-ծաղկող: Համեմատություն անցկացնելով Դ. Դեմիրճյանի և Վ. Խեչումյանի ստեղծագործությունների հետ, ատենախոսը ուշագրավ հետևություն է անում. «Անհրաժեշտ է հավելել, որ միջնադարյան գրիչ-ծաղկողների սրբազան գործն արդեն ավելի ուշ իր ուսերին է վերցնում Գ. Դերիկյանի «Վիրավոր կռունկ» վեպի գլխավոր հերոսը՝ Արթինը...» (էջ 125): Այստեղ, թերևս պետք է նշել, որ Արթինը նույնական է հեղինակի հետ, այսինքն՝ Գևորգ Դերիկյանի, ով էլ իր ամբողջ կյանքի ընթացքում գրիչ-ծաղկողների վարքով ապրեց, ստեղծելով մեծ գրական ժառանգություն:

Այժմ մի քանի դիտարկումներ.

1. Նախ, պետք է նշել, որ Աննա Երկանյանը հրաշալիորեն բացահայտել ու վերլուծության է ենթարկել Գևորգ Դերիկյանի պատմափիլիսոփայությունը: Այնպես որ խնդրադրումը՝ ստեղծագործությունը, կարելի էր փոխարինել պատմափիլիսոփայություն ձևակերպումով: Ատենախոսությունից դուրս են մնացել Դերիկյանի գրականության այնպիսի իրողություններ, ինչպիսին են հրապարակագրությունը, ակնարկը, հոդվածները, նամակները, որոնց ուսումնասիրությամբ միայն պետք է ամբողջանար հեղինակի ստեղծագործությանը նվիրված աշխատությունը: Չնայած, պետք է նշել, որ մյուս կողմից էլ ատենախոսը ճիշտ է վարվել, քանի որ ամբողջական ու հիմնավոր է ներկայացրել գրողի պատմափիլիսոփայական աշխարհայացքը: Ամեն դեպքում, խոստովանենք, որ որոշ հոդվածների ու հրապարակումների հպանցիկ անդրադարձել է՝ մասնավոր հարցադրումից ելնելով:

2. Գևորգ Դերիկյանի ստեղծագործությունը քննվել է գրական ընթացքից դուրս, ճիշտ է, «Ներածության» մեջ ատենախոսը անդրադարձել է 1960-70-

ականների գրական ընթացին, այնուհանդերձ, լավ կլիներ նյութը քննել բուն գրական ընթացքի հայեցակետից ևս:

3. Բացակայում է արձակի շուրջ եղած բանավեճի անդրադարձներն ու Դերիկյանի հայեցակարգը այդ բանավեճի մեջ:

4. Լավ կլիներ աշխատանքում համեմատական վերլուծություններ տեսնել Վարդան Գրիգորյանի և Արմեն Մարտիրոսյանի պատմավեպերի հետ:

5. Ատենախոսության մեջ վերլուծական միտքը իշխում է տեսականին, իսկ տեսականն էլ համակարգված չէ: Լավ կլիներ, որպեսզի ատենախոսը առանձնացներ պատմավեպում տեղի ունեցող տեղաշարժերն ու իրողությունները (միջնադարյան էքսկուրս, կորուսյալ երկրի վերակերտում, ապահերոսականացում, մարդկային դրամա և այլն) և այս ուղղությամբ ներկայացներ 50-ամյա պատմավեպի զարգացման նկարագիրը, այլապես ստացվում է Դերիկյանն իր սերնդակիցներից անկախ ստեղծագործել է անհաղորդ մնալով մյուսներին:

Նորագույն շրջանի հայ գրականության արժեքը նորովի է նշանավորվում որպես 20-րդ դարավերջի իրողություն, և ունի գրական ամբողջություն: Այդ գրական ամբողջության հիմքերը դնողներից մեկը Գևորգ Դերիկյանն է: Ինչպես հասկանալի է վերը նշվածից, Աննա Երկանյանը, ունենալով մեկնաբանության իր ելակետը, տեսական համակարգվածության է ենթարկել և վերլուծել գրողի ստեղծագործությունը, հստակ սահմանելով իր ուղղվածությունը՝ գաղափարական և պատմափիլիսոփայական հարցադրումներ: Ատենախոսի համար առաջնայինը գրականության ամբողջականության հարցն է՝ անկախ նրանից՝ խոսքը վերաբերում է պատմությա՞նը, թե ազգային գոյության խնդիրներին: Մեկնաբանության այս միտումը ենթադրում է ոչ միայն գրական պատրաստություն, այլև՝ տեսական ընկալումների լայն հորիզոն, որի վկայությունը Աննա Երկանյանի «Գևորգ Դերիկյանի ստեղծագործությունը» ատենախոսությունն է: Եթե հեղինակը, ներկա պարագայում, հավելեր ատենախոսությունը որոշ մանրամասներով և մի քանի ուրիշ գրողների դերիկյանական փիլիսոփայությանը մոտ ստեղծագործությունների

վերլուծությամբ ևս, ապա, կարելի էր ասել, որ Գևորգ Դևրիկյանի վերաբերյալ մենք ունենք մի ավարտուն աշխատություն:

Հաշվի առնելով վերը շարադրվածը, դիմելով ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գրականության մասնագիտական խորհրդին, միջնորդում եմ Աննա Երկանյանին շնորհել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան «Գևորգ Դևրիկյանի ստեղծագործությունը» ատենախոսության համար, ինչին հեղինակն արժանի է:

*ԱՐՄԵՆ ԱՎԱՆԵՍՅԱՆ*

*Բանասիրական գիտությունների թեկնածու*